

ԿԱՂԱՆԴԻ ԾԱՂԻԿ(ՓՈՒԷՆՍԷԹԻԱ)

Այս ծաղիկի պատմությունը կապուած է մեքսիքական առասպելի մը, որուն համաձայն, գիւղացի աղջնակ մը ուզած է պատուել իրենց գիւղի եկեղեցւոյ մէջ զետեղուած Յիսուս մանուկը գեղեցիկ ծաղիկներով, ան նիւթական կարողութիւն չունենալով, տխուր կ'ուղղուի եկեղեցի:

Ճամբան անոր կը յայտնուի հրեշտակ մը եւ իրեն կը թելադրէ, որ քիչ մը խոտ հաւաքէ ու Յիսուս մանուկին տանի իբրեւ նուէր:

Աղջնակը խոտերը կը հաւաքէ եւ կը զետեղէ խորանին առջեւ, այդ խոտերը կը վերածուին կարմիր ու գեղեցիկ ծաղիկներու, որոնք ուրիշ բան չեն, եթէ ոչ մեզի ծանօթ Փուէնսէթիան:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ԳՈՅՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Սպիտակ - մաքրութիւն, անմեղութիւն և խաղաղութիւն

Կարմիր - Քրիստոսի արիւնը

Կանաչ - յաւերժական կեանք

Ոսկեգոյն կամ արծաթագոյն `Բերդեհեմի աստղը

Կապոյտ – Աստուածամայր



Միացո՛ւր թիւերը:



Հ.Մ.Ը.Մ. Սուրբոյ
Շրջ. Սկաւուտ Խորհուրդ
Թիւ 2/2019



Հրատարակչական
Յանձնախումբ



Շնորհաւոր Նոր Տարի



ՏՈՆԱԾԱՆ

Տօնածառ ջան տօնածառ,
Ինչ սիրուն ես ու պայծառ,
Էս ինչ լաւն է, էս ինչ լաւն է,
Չորս կողմը լոյս ու պայծառ:

Փայլուն աստղը զագաթին,
Օտրին տակ ձմեռ պապին,
Էս ինչ լաւն է, էս ինչ լաւն է,
Չորս կողմը լոյս կը փայլ է:



ԻՆՉՊԷՍ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԿԸ ՆՇԵՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ:

Եւրոպացիները Նոր տարին կը դիմատրեն 31 Դեկտեմբերին, սակայն անոնց համար գլխաւոր տօնը Մուրբ Ծնունդն է:

Անգլիոյ բնակիչները կէսգիշերին՝ ժամացոյցի վերջին զարկերուն հետ, կը բանան տան ետեւի կողմի դռները՝ հին տարին դուրս բերելու համար, եւ կը բանան մուտքի դուռը՝ նոր տարին ներս առնելու համար: Երեխաները քնանալէն առաջ Սանթա Քլաուզի նուէրներուն համար ափսէ կը դնեն, իսկ կօշիկին մէջ խոտ՝ անոր արանակին համար:

Ի դէպ, Անգլիոյ մէջ սկիզբ առած է բացիկներ փոխանակելու արանոյթը: Առաջին ամանորեայ բացիկը տպագրուած է Լոնտոնի մէջ՝ 1843-ին:

Ֆրանսայի մէջ Ձմեռ պապը՝ Փեր Նուելը կ'այցելէ Նոր տարուան գիշերը եւ նուէրները կը դնեն մանկական ոտնամաններուն մէջ:

Գերմանիան իր իւրայատուկ արանոյթը ունի. սլաքները կը սկսին կէս գիշերը ազդարարել, տարբեր տարիքի մարդիկ կը բարձրանան սեղաններու, աթոռներու, բազկաթոռներու վրայ եւ ուրախ բացականչութիւններով, ժամացոյցի վերջին զարկին հետ «կը ցատկէ» Նոր տարին:

Իտալիոյ մէջ ամանորեայ հետաքրքիր սովորոյթին մասին գիտեն բոլորը. հին տարուան վերջին վայրկեաններուն անոնք դուրս կը նետեն հին իրերը: Եթէ հին իրերը դուրս նետուին, նոր տարին նորերը բերելու առիթ կ'ընծայուի:

Իսպանիոյ մէջ Նոր տարուան գիշերը, ժամացոյցի զարկերուն հետ պէտք է ուտել խաղողի 12 հատիկ:

Քուպայի մէջ Նոր տարուան նախօրէին բնակիչները տան ամանեղէնը կը լեցնեն ջուրով, իսկ կէսգիշերին դուրս կը թափեն պատուհանէն: Այդպիսով՝ Նոր Տարուան անոնք կը փափաքին ունենայ յուսարը եւ մաքուր ճանապարհ:

Չինաստանի մէջ Նոր տարին լապտերներու տօն է: Ան կը նշուի Լուսնային օրացոյցի տասնհինգերորդ օրը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆՈՒՌՈՐՀՆԷՔ:

Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինութեամբ Ամանորի գիշեր ժամը 00.30 ին բոլոր եկեղեցիներու մէջ կը կատարուի “Նուռ օհնէք”ի արարողութիւնը: Հայկական արանոյթեան մէջ “Նուռ” ը իբրեւ ազգային խորհրդանիշ կեանքի, ծաղկունքի եւ առատութեան իմաստ ունի:



Տարի Հացը:



Հայ ժողովուրդը ունի նաեւ կաղանդի յատուկ նախապաշարումներ, հաւատալիքներ:

Իւրաքանչիւր հայ վայր շրջան ունէր իր նախապաշարումներն ու հաւատալիքները: 31 Դեկտեմբերին, ամէն տեղ հաց կը թխէին մեծ քանակութեամբ: Նոր տարին կը սկսէր նոր թխուած հացով: Հացի կողքին կը թխուէր նշանաւոր Տարի Հացը, ցորենի ալիւրով, ջուրով կամ կաթով շաղուած բաղարջը: Տարի Հացը տափակ հաց մըն էր, շերտերու բաժնուած, ընտանիքի անդամներուն թիւով, երեսը զարդարուած էր չամիչով, ընկոյզով եւ զանազան նկարներով զծագրուած խաչով կամ տարուան թուականով:

“Տարի Հաց”ը կը խորհրդանշէ Նոր Տարին, որուն երեսին վրայ կ'երեւէին 12 զիծեր եւ կամ ճիւղաւորումներ, որոնք կը ներկայացնէին տարուան 12 ամիսները: Անոր մէջ կը դրուէր դրամ, իսկ որուն որ ելլէր այդ դրամը, կ'ըլլար բախտաւորը եւ ընտանիքը իր բախտը կը սպասէր որ անկէ գայ:



2020